

«ԱԳԲԱ Լիզինգ» ՎԿ ՓԲԸ-ն, Եվրոպական Ներդրումային Բանկի հետ կնքված համաձայնագրի շրջանակներում (EIB; www.eib.org), աջակցում է փոքր և միջին բիզնեսներին (ՓՄՁ-ներ) և մինչև 3000 աշխատակից ունեցող ձեռնարկություններին (Միջին Կապիտալիզացիայի կազմակերպություններ՝ այսուհետ՝ Միջ-Կապ-եր)՝ ապահովելով վերջիններիս շատ ավելի մատչելի ու անգնահատելի ռեսուրսով և ձկուն մարման ժամանակացույցերի համաձայն վճարումներ կատարելու հնարավորությամբ:

ԵՆԲ-ն Եվրոպական Միության՝ երկարաժամկետ վարկեր տրամադրող բանկ է, որի նպատակն է՝ ֆինանսավորել ներդրումային ծրագրերը՝ ի նպաստ ԵՄ քաղաքականության նպատակների իրականացման: Հաշվի առնելով ԵՄ արտաքին կապերի զարգացմանն ուղղված հեռանկարը, Եվրախորհրդարանի և Խորհրդի որոշմամբ, ԵՆԲ-ին շնորհվել է Արտաքին Մանդատ¹՝ ԵՄ-ից դուրս համապատասխան ծրագրերը ֆինանսավորելու նպատակով:

Շնորհիվ կապիտալի շուկաներում իր ամենալավ հավանական վարկանիշի (ԱՀՎ)՝ ԵՆԲ-ն կարող է նպաստավոր պայմաններով փոխառությամբ միջոցներ ներգրավել, որոնք մեր միջոցով փոխանցում է ՓՄՁ-ներին և Միջ-Կապ-երին: ՓՄՁ-ները և Միջ-Կապ-երը հատուկ և անհատական ձևով տեղեկացվում են մեր կողմից ԵՆԲ-ի ներգրավվածության և դրա՝ ստացված վարկերի ֆինանսական պայմանների վրա ազդեցության մասին: ՓՄՁ-ներին և Միջ-Կապ-երին աջակցություն ցուցաբերելու մասին շատ ավելի մանրամասն տեղեկատվություն կարելի է ստանալ ԵՆԲ-ի կայքէջից (EIB; www.eib.org):

ԵՆԲ-ն ընդլայնում է իր աջակցությունը ՓՄՁ-ներին և Միջ-Կապ-երին՝ օգնելով այս կարևոր հատվածին ներգրավվել վարկային ավելի կենսական ու նոր շերտեր: Վարկի ժամկետը պետք է լինի առնվազն 2 տարի (վարկի փաստացի ժամկետը կախված կլինի ֆինանսավորվող նախագծի տնտեսական և տեխնիկական կյանքից): այն կարող է ռեսուրս հանդիսանալ ինչպես շատ փոքր նախագծերի, այնպես էլ առավելագույնը 25 միլիոն արժողությամբ ներդրումների համար: Այնուամենայնիվ, ԵՆԲ աջակցությունը չի կարող գերազանցել 12,5 միլիոն Եվրոն:

ԵՆԲ-ի կողմից կարող են վարկավորվել՝

- տեղական ՓՄՁ-ները, որոնց աշխատողների թվաքանակը, մինչ ներդրումը, համախառն արդյունքներով, կազմում է մինչև 250 մարդ,
- տեղական Միջ-Կապ-երը, որոնց աշխատողների թվաքանակը, մինչ ներդրումը, համախառն արդյունքներով, կազմում է մինչև 3000 մարդ,
- շատ տնտեսական ոլորտներ՝ որոշ սահմանափակումներով, ներառյալ զենք ու զինամթերքի, զենքի, ռազմական կամ ռստիկանական սարքավորումների կամ ենթակառուցվածքների, մարդկանց անձնական իրավունքները և ազատությունը սահմանափակող սարքավորումների կամ ենթակառուցվածքների արտադրությունը, գործունեություններ, որոնք հանգեցնում են բնապահպանական զգալի ռիսկերի, գործունեություններ, որոնք էթիկայի կամ բարոյականության

¹https://www.eib.org/attachments/strategies/mou_ec_eib_on_external_mandate_en.pdf

- տեսանկյունից համարվում են վիճահարույց կամ ազգային օրենսդրությամբ արգելված, գործունեություններ, որոնք ուղղված են այնպիսի ապրանքների արտադրությանը կամ վաճառքին, որոնք օգտագործվում են ապրանքանիշի կամ աշխարհագրական ծագումը վկայող նշանի աղավաղման գործում, ինչպես նաև այնպիսի գործունեություններ, որոնք կապված են խաղամուլության կամ ծխախոտի արտադրության հետ:

ԵՆԲ-ի կողմից տրամադրվող վարկը կարող է օգտագործվել՝ ֆինանսավորելու որևէ ՓՄՁ-ի կամ Միջ-Կապ-ի զարգացման համատեքստում առաջացած բոլոր ներդրումները և ծախսերը, որոնք են՝

- նյութական ներդրումներ – նյութական ակտիվների գնում, վերանորոգում կամ ավելացում՝ հողատարածքի գնման հետ կապված որոշ սահմանափակումներով,
- ոչ նյութական ներդրումներ – մասնավորապես գիտահետազոտական և կոնստրուկտիվ աշխատանքների ժամանակ առաջացած ծախսեր, ընթացիկ լիցենզիաների և ծրագրային ապահովման սարքավորումների գնում,
- ՓՄՁ-ների կամ Միջ-Կապ-երի օպերատիվ գործունեության համար անհրաժեշտ միջնաժամկետ և երկարաժամկետ շրջանառու կապիտալ:

ԵՆԲ-ի կողմից տրամադրվող վարկերի դեպքում՝

- դուք կարող եք ստանալ շահավետ տոկոսադրույքներ կամ ավելի երկար տենորներ՝ համեմատած բիզնեսի վարկավորման ստանդարտ պայմանների հետ,
- դուք կարող եք բանակցել վարկի ժամկետի կամ հաճախականության գծով՝ համապատասխանեցնելով հանգամանքները և դրամական հոսքի պահանջները Ձեր բիզնեսին,
- այն թույլ է տալիս զգալի ներդրումներ կատարել Ձեր բիզնեսում՝ առանց բացասաբար ազդելու Ձեր դրամական հոսքի կամ իրացվելիության վրա:

Այն դեպքում, երբ ԵՆԲ-ի կողմից պահանջվում է՝

- ա) ողջամիտ ծանուցում ստալանուն պես՝ թույլատրել ԵՆԲ ներկայացուցիչներին այցելել և ուսումնասիրել բոլոր տեղանքները, տեղադրված կոնստրուկցիաները և աշխատանքները, որոնք հենց կազմում են վարկի առարկա հանդիսացող նախագիծը,
- բ) Գերմանահայկական հիմնադրամը կարող է «ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ-ի մասին տեղեկատվություն հաղորդել ԵՆԲ-ին: